ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ՀՀ ՆԳՆ ԲՄԱՊՁԲ-Ա-46/2026 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք.Երևան **«09» «07» 2026թ.**

Ժամը 11:00

Նիստերին մասնակցում էին՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ռաֆայել Մկրտչյան (հանձնաժողովի նախագահ),
բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության ռադիոկապի ապահովման բաժնի պետ Գուրգեն Գրիգորյան (գնահատող անդամ),
գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության ռադիոկապի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Մկրտչյան (գնահատող անդամ),
դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ասատուր Աբասյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Օրակարգ

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **հատուկ նշանակության տեխնիկական միջոցների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԲՄԱՊՁԲ-Ա-46/2026** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հանձնաժողովի 07.07.2026 թվականի նիստը կասեցվել էր և **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն ու «Ալիկանտե» ՍՊԸ-ն** հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

2. Տեղեկություն բանակցությունների ընթացքի մասին.

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն ու «Ալիկանտե» ՍՊԸ-ն ներկա չեն գտնվել բանակցություններին և հետևաբար գների նվազեցման վերաբերյալ բանակցություններ տեղի չեն ունեցել:

3. Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԲՄԱՊՁԲ-Ա-46/2026 ծածկագրով բաց մրցույթը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած, այն է՝ «հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին»:

4. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի՝ անգործության ժամկետ է սահմանվում չկայացած ընթացակարգի մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 10-րդ օրացուցային օրը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

ՆԱԽԱԳԱՀ՝ Ռաֆայել Մկրտչյան

ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Գուրգեն Գրիգորյան

Դավիթ Մկրտչյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ասատուր Աբասյան